




ՍՐԲԱԶԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հեղինակ՝ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Անսպասելի չէր, երբ վաստակավոր երաժիշտ Վարդան Սարգիսյան սույն ընդարձակ աշխատասիրությամբ իր նպաստը բերավ հայ հոգևոր երաժշտության: Մինչև այս աշխատության ձեռնարկումը արվեստագետը տված էր արդեն կարգ մը գործեր: Այսպես, 1958-ին ան լույս ընծայած էր «Արևագալի երգերու» մշակումը, 1960-ին՝ «Կանոն Կուսին պասկին» հատորը, 1963-ին անոր հաջորդած էր «Պաշտոն հոգեհանգստեանը», տարի մը վերջը 1964-ին՝ «Ծաշու շարականը Յարութեանը»: Միշտ անխոնջ և անշշուկ, և մանավանդ նախանձախնդիր ու գիտլ նվիրված նույն փափուկ և պահանջկոտ ձեռնարկին իրականացման, 1966-ին ահա ան տվավ իր աշխատասիրություններն ամենաձավալունը՝ երկու շքեղ հատորներու մեջ ամփոփված շարականներու, դաշնավորումները՝ «Սրբազան երգեցողութիւնը Հայաստանեայց եկեղեցոյ»:

Այս հավաքածուն կ'արունակե ավելի քան 200 դաշնավորված կտորներ, ոմանք միաձայն՝ երգեհոնի ընկերակցությամբ, իսկ մեծ մասամբ՝ քառաձայն երգչախումբի համար:

Տարակույս չկա՝ որ այդպիսի ձեռնարկի մը հաջող ելքը չէր կրնար կախում ունենալ միմիայն ազնիվ ճաշակի մը պարզեցած առավելություններէն. անհրաժեշտ էր նախապես յուրացուցած ըլլալ ծիսական արարողություններու ոգին, անոնց իմաստը: Հայ ժողովրդական ու հոգևոր երաժշտության սերը Վ. Սարգիսյանի մեջ շատոնց հայտնված

էր: Իր պատանեկութենէ ի վեր եկեղեցական շրջանակներու մեջ ապրած և եկեղեցիին ծառայած ըլլալը, սույն նյութին իր մոտեցման կերպի հաջողության երաշխիք մը պիտի տար անշուշտ, մանավանդ որ իր հիմնական պատրաստությունը ան ստացած էր իբր հառաջադեմ աշակերտը Կոմիտաս վարդապետի, կատարելագործված նաև ի Փարիզ և Բրյուսել և միևնույն ատեն մեծ փորձառությունն ձեռք բերած՝ իր իսկ դեկավարած երգչախումբերով:

Ներկա հատորներու մեջ դաշնավորողը մեծ հոգածությամբ աշխատած է անմշակ բազմաթիվ երգերու մեղեդիական տարրը գետնելէ իր բուն մաքրության մեջ, առաջնորդվելով **պրոսոդիի** տրամաբանական պահանջներէն: Բժախնդիր կերպով պահպանած է նաև անոնց դիմագծային և կազմական էությունը:

Նույնքան անոր ուշադրության առարկա եղած է մեղեդիներու կշռութային պարունակությունը, զայն իր բուն **ռաջիոնալ** իմաստին մեջ ճշգրտորէն վերարժեքավորելու հարցը: Ասոնք այն տարրերն են, որ ժամանակի ընթացքին արևելյան երաժշտության ազդեցության ներքև անպատասխանատու անձերու կողմէ հաճախ աղավաղումներու ենթարկված էին:

Գալով բազմաձայն դաշնավորման հարցին՝ որքան իր գեղագիտական միտքը, նույնքան նաև իր հոգեկան ականջը ի լուր է շարականներու ներքին իմաստին, անոնց **պարոսին**: Այլ խոսքով՝ եթէ արվեստագետը

դաշնավորման պահուն ներշնչված է անոնց **ինտոնացիոնեն**, նույնքան ազդված է նաև ծխական բանահյուսության ոգիեն, որմե ծագում կառնե ան:

Արդարև, հայ գեղագիտական չքանաձևված օրենք մը կա՝ հոգեկան ներշնչման թե-
լադրությունները: Ասոնցմե առաջնորդվելով արվեստագետը պիտի կարենա հյուսել ձայ-
ներու շարահարումները, որոնք պետք չէ որ
զարտուղին ազգային երաժշտական և բա-
նահյուսական վաղնջական ոգիեն: Այդ
նկատառումով, առանց նպատակ ունենա-
լու խորանալ իր արվեստի ներքին ծալքերու
մանրամասնություններուն մեջ, պետք է ը-
սենք թե Սարգիսյանի դաշնավորումները

ընդհանուր առմամբ սեղմ են ու խտացյալ:
Այսուհանդերձ դաշնյակներու ներքին հյուս-
վածքին պոլիֆոնիկ շարժականությունը՝ մե-
ղեղիական գծի ճկունության զուգահեռ՝ կա-
պահովե նաև անոնց անհրաժեշտ թափան-
ցրկությունը: Այսպիսով, Սարգիսյանի ստեղ-
ծած բազմաձայն հանդերձանքը կօժտե
սույն շարականները հոգեկան խորությունով
ու ներգործող արվեստով:

Վարդան Սարգիսյանի «Սրբազան երգե-
ցողությիւնք» ծավալուն աշխատասիրությու-
նը, ինչպես և նախորդները, անստարակունե-
լիորեն քարձր գնահատության արժանի գոր-
ծեր են:

Գ. ԶԵՐԵՍԹԵՄՅԱՆ

Փարիզ

